ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Բալահովիտ,

1 փող. 38, Հեռ. (0222)63539

N 138
05 մայիս 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գուլոյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջներով, Ձեզ է ներկայացվում համայնքի ղեկավարի որոշումները 2017թ-ի մայիսի 2-ից 5-ը ընկած ժամանակահատվածի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատ.՝ Ա. Պետրոսյան
Հեռ.022263539

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 114-Ա

2017ԹՎԱԿԱՆԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՎԵՐԱԲԱԽՇՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ

1. Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի բյուջեի ապարատի 4239 հոդվածի /բաժին 1 խումբ 1 դաս 1/ նախատեսված գումարից 50.0 /հիսուն հազար/ դրամ տեղափոխել ապարատի 4252 հոդված /բաժին 1 խումբ 1 դաս 1/
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2017թ.մայիսի 2
գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 115-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի V գլխի 32-րդ կետը, Բալահովիտ համայնքի ավագանու 2011թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 44-Ն որոշումը և քաղաքացի՝ Մարինե Մարտիրոսյանի դիմումը, որոշում եմ

1. Քաղ՝ Մարինե Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի վկայական N 01092016-07-0014 տրված 2016թվականի սեպտեմբերի 1-ին/ /ծածկագիր 07-018-0004-0037/ սահմանված կարգով կազմված և հաստատված հողամասի և շինությունների բաժանման սխեմաների համաձայն

Առանձնացվող մաս

S=0,028690հա մակերեսով հողամասին և շենք շինությանը տրամադրել նոր հասցե Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 1-ին փողոց թիվ 34

Մնացող մաս

S=0.08021հա մակերեսով հողամասի հասցեն թողնել նույնը

Կոտայքի մարզ գ.Բալահովիտ 1-ին փողոց թիվ 32

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա է պետ.գրանցման օրենքովսահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017թ. մայիսի 3
գ.Բալահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բալահովիտ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Բալահովիտ, (0222)63539, balahovithamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
03 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 116-Ա

ԲԱԼԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերի, որոշում եմ

1. 2017թվականի մայիսի 10-ից մայիսի 31-ը ներառյալ, համայնքի տարածքում անցկացնել սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչապատման միջոցառումներ, իսկ մայիսի 13-ին, մայիսի 20-ին, մայիսի 27-ին հայտարարել սանիտարական միջոցառումների անցկացման և կանաչապատման միասնական օրեր:
2. Սանիտարական մաքրման միջոցառումներ անցկացնելու աշխատանքները համակարգելու վերահսկելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Վ.Հարությունյան– համայնքի ղեկավարի տեղակալ -Հանձնաժողովի նախագահ
Ա.Պետրոսյան - աշխատակազմի քարտուղար - անդամ
Ս.Դավթյան - համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ հաշվապահ - անդամ
Վ.Գրիգորյան - ակումբավար - անդամ

3. Համայնքի տարածքի հիմնարկ - ձեռնարկությունների ղեկավարներին. սանիտարական միջոցառումների ընթացքում մաքրել, բարեկարգել, կանաչապատել իրենց կազմակերպությունների տարածքները և շրջակայքը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԿԱՄՈ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2017թ. մայիսի 3
գ.Բալահովիտ